ALENSHIN

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

<<ԱԼԵՆՇԻՆ>>

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

---

15.06.2025թ.
Թիվ 14/25
ԼԻՑԵՆԶԻԱ ՔՊԼ-001523

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ ՎԱՆԱՁՈՐԻ
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՎԲԿ-ՄԱԾՁԲ-25/105

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ Լոռու մարզի Վանաձորի բժշկական կենտրոն ՓԲԸ -ի "ՆԱՐԵԿ"մասնաշենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ

ՎԱՆԱՁՈՐ 2025

«Հաստատում եմ»

«ԱԼԵՆՇԻՆ» ՍՊԸ տնօրեն

- - - - - - - - - - - -Ա. Սահակյան

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## *ՀՀ Լոռու մարզի Վանաձորի բժշկական կենտրոն ՓԲԸ -ի "ՆԱՐԵԿ"մասնաշենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ*

Հետազոտությունը կատարվել է Վանաձորի բժշկական կենտրոն,,ՓԲԸ-ն ի դեմս տնօրեն Մ.Հազրոյանի և <<ԱԼԵՆՇԻՆ>>ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա Սահակյանի միջև կնքված 10.06.2025 թ, ՎԲԿ-ՄԱԾՁԲ-25/105 պայմանագրի համաձայն:

Հետազոտվող բժշկական կենտրոն ՓԲԸ -ի մասնաշենքի տեխնիկական վիճակը գնահատվել է ըստ գործող նորմատիվ փաստաթղթերի (ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծային նորմեր» և «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի տեխնիկական վիճակի հետազննության և վկայագրավորման /անձնագրավորման/ մեթոդական ցուցումներ»), ինչպես նաև ՀՀՇՆ 20.06.2014 «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում» հիմնական դրույթների:
Ստորև բերվում են մասնաշենքերի տեխնիկական նկարագիրն ու զննման արդյունքները:

նկ.1 ,,Նարեկ,, հիվանդանոցի մասնաշենքի ընդհանուր տեսքը գլխավոր ճակատից



նկ. 2, 3, 4 ,,Նարեկ,, հիվանդանոցի մասնաշենքի ընդհանուր տեսքերը տարբեր ճակատներից





06962402
«ԱԼԵՆՇԻՆ»
«АЛЕНШИН»
«ALENSHIN»



նկ. 5, 6, ,,Նարեկ,, հիվանդանոցի մասնաշենքի ընդհանուր տեսքերը տարբեր ճակատներից





06902402
«ԱԼԵՆՇԻՆ»
«АЛЕНШИН»
«ALENSHIN»

նկ. 7, 8 ,,Նարեկ,, հիվանդանոցի մասնաշենքի ընդհանուր տեսքերը տարբեր ճակատներից





նկ. 9, 10, 11 ,,Նարեկ,, հիվանդանոցի մասնաշենքի ընդհանուր տեսքերը տարբեր ճակատներից







նկ. 12, 13, 14 ,,Նարեկ,, հիվանդանոցի մասնաշենքի ընդհանուր տեսքերը տարբեր ճակատներից





նկ.15,16,17,18, 19,20,21 ,,Նարեկ,, հիվանդանոցի մասնաշենքի պատերի, առաստաղի ծածկի և հատակի սանդղավանդակների վիճակները

















Հետազոտվող հիվանդանոցի շենքն 1990-ական թվականներին կառուցված խաչաձև հատակագծով , երկհարկանի, իսկ թևերի հատման ընդհանուր հատվածամասի վրա բարձրացված է տեխնիկական հարկը 16,2*16,2մ առանցքային չափերով, որտեղ տեղակայված են օդափոխության համակարգի սարքավորումները և էլ վահանակները: Երկայնական և լայնական թևերի առանցքային չափերն են համապատասխանաբար 16,2*56,1 մ և 16,2*37,8 մ: Արտաքին պատերը միաձույլ երկաթբետոն են 26 սմ հաստությամբ: Արտաքինից տաքացված են փրփրապլաստե սալերով 14 սմ հաստությամբ, որի վրա իրականացված է ճակատային ծեփամածկում ցանցի վրա:Միջհարկային ծածկը միաձույլ երկաթբետոնե սալ է +3,900 նիշի վրա: Երկրորդ հարկի ծածկը կառուցված է փայտե հեծաններով, իսկ միջհեծանային տարածքը լրացված է փրփրապլաստե սալերով 20 սմ հաստությամբ: Տանիքը իրականացված է փայտե կոնստրուկցիաներով, որի վրա տախտակամածն է և ճկուն կղմինդրով տանիքածածկը: 1-ին և 2-րդ հարկերում միջնորմները գիպսաստվարաթղթե են՝ իրականացված մետաղական

հիմնակմախքի վրա:Հիմնակմախքը 2 կողմերից երեսապատված է 2 շերտ գիպսաստվարաթղթով 12,5մմ հաստության: Հիմնակմախքը   լցված է ձայնամեկուսիչ նյութով: 1-ին և 2-րդ հարկերում միջնորմերը իրականացված են երկշերտ գիպսաստվարաթղթե սալերով մետաղական հիմնակմախքի վրա: Առաստաղը կախովի է "արմստրոնգ" տիպի հատակից 2,7մ բարձրության վրա:Պատուհանները մետեղապլաստե են, գտնվում են լավ վիճակում: Դռները փայտից են, երեսապատված, գտնվում են լավ վիճակում:
Գոյություն ունեցող շենքի կենտրոնական մասի/հատակագծում՝ քառակուսի/ տանիքը քառալանջ է, իսկ թևերիտանիքը ծրարաձև է որոնք հարում են կենտրոնական մասին: Տանիքի կոնստրուկցիան ամբողջությամբ փայտից է, իսկծածկույթը ճկուն կղմինդր է՝ տախտակե տախտակամածի վրա: Շենքի արտաքին պատերը միաձույլ երկաթբետոն են, որի վրա ամրացված է  ջերմամեկուսիչ շերտ 14սմ հաստությամբ և սվաղած է ճակատային մածիկով՝ ցանցիվրա:  Որմնախարիսխը՝ ±0,000 նիշից 1մ բարձրությունից երեսապատված է 30մմ հաստությամբ բազալտե սալիկներով :Անձրևաջրերի հեռացման ջրատար խողովակները իրականացված են ցինկապատթիթեղից, որոնք միմյանց միացված են զոդումով:
Հիվանդանոցի տարածքը գտնվում է Բաթումի և Բանակի փողոցների խաչմերուկի հարավ-արևելյան կողմում: Հիվանդանոցի հարևանությամբ տարածքի հարավային մասում գտնվում է կաթսայատունը: Հիվանդանոցի տարածքը շրջափակված է տարբեր բարձրությունների հենապատերով, որոնց վրա տեղադրված են մետաղական ճաղավոր ցանկապատ:

## Հետազննությամբ պարզվել է.

Գոյություն ունեցող տանիքի ծածկույթը տեղ-տեղ վնասված է, որտեղից անձրևաջրերը թափանցում են ներքին հարկերը, որի հետևանքով մասամբ վնասվել են 1-ին և 2-րդ հարկերի կախովի  առաստաղը "արմստրոնգ տիպի", գիպսաստվարաթղթե միջնորմերը, վինիլե հատակները: Անձրևաջրերից վնասված գիպսաստվարաթղթերը աջայնամեկուսիչը պետք է քանդել պահպանելով հիմնակմախքը և վերականգնել նմամնատիպ նյութերով:Վնասված դռները նախատեսվում է վերանորոգել կամ փոխարինել 2-րդ հարկի ապամոնտաժված դռներով: 2-րդ հարկի նախատեսվում է քանդել "արմստրոնգ" տիպի առաստաղների պանելները, որոնցով պետք է վերականգնել 1-ին հարկի վնասված-քայքայված առաստաղները, իսկ 2-րդ հարկի առաստաղը իրականացնել նոր "արմստրոնգ" տիպի պանելներով:
Պետք է քանդել հատակների ծածկույթը՝ վինիլե և կերամիկական սալիկներով իրականացված, սանհանգույցներում և սենյակներում՝ պատերի կերամիկական սալիկներով երեսապատվածքը, 2-րդ հարկի "Արմստրոնգ" տիպի առաստաղը ամբողջությամբ, որի մի մասով պետք է վերակառուցել-վերականգնել 1-ին հարկի վնասված "Արմստրոնգ" տիպի առաստաղը:
Գոյություն ունեցող տանիքի ծածկույթը տեղ-տեղ վնասված է,որտեղից անձրևաջրերը թափանցում են ներքին հարկերը:
Նախատեսել տանիքը հիմնանորոգել, որի  համար անհրաճեշտ է իրականացնել հետևյալ շինարարական  աշխատանքները.
· քանդել տանիքի ջրամեկուսիչ ծածկույթը
· դիտարկել փայտե կոնստրուկցիայի և տախտակամածի  վիճակը
· վնասված, փթած, նեխած փայտե կոնստրուկցիաները ևտախտակամածի հատվածները փոխարինել նորերով
· փայտե կոնստրուկցիաները, տախտակամածը և փայտե դետալները ամբողջությամբ մշակելհականեխիչ-հրդեհապաշտպան լուծույթով
· տախտակամածի վրա իրականացնել ջրամեկուսիչծածկույթի /ճկուն կղմինդր/ շերտերը

· վերանորոգել վնասված ջրատար խողովակները
Բազալտե սալիկների զգալի մասը անջատված են պատից,մոտ 50%-ը ենթակա է վերանորոգման, այսինքն անջատված սալիկները հանել և նորից տեղադրել սալիկի սոսնձի վրա:
Շենքի արտաքին պատերի որմնախարսխից վերև վնասված հատվածների սավաղը քանդել , մաքրել և սվաղելճակատային ծեփամածիկով: Շենքի ճակատները ներկել ճակատային ներկով:
Արտաքին պատուհանագոգերը պաշտպանված են ցինկապատ թիթեղե արցունքաթափերով, որոնք պետք է ապամոնտաժել և փոխարինել բազալտե սալիկներից պատուհանագոգերով (30*250մմ):
Հենապատերը սվաղած են ց/ավազե շաղախով, որոնց մեծ մասը անջատված են պատերից, որոնք պետք է ամբողջությամբ քանդել և պատերիմակերևույթները նախապատրաստել նոր սավաղի և բազալտե սալիկներով
երեսապատման համար:
Տարածքի շենքի շուրջ բարեկարգել կանաչապատ տարածքները, կատուցել մայթերը և երթևեկելի գոտին:

### *Եզրակացվում է.*

Ելնելով հետազննության արդյունքներից և վերը նշված նորմերի պահանջներից ( շենքը գտնվում է սեյսմիկ 3-րդ գոտում ), ՀՀ Լոռու մարզի Վանաձորի բժշկական կենտրոն ՓԲԸ -ի " ՆԱՐԵԿ" մասնաշենքի հիմնական կրող և ինքնակրող կոնստրուկցիաների տեխնիկական վիճակն, ընդհանուր առմամբ, գնահատվում է **«բավարար»,** շենքի ընդհանուր վնասվածության մակարդակը դասվում է **2-րդ (երկրորդ) աստիճանի**: Շենքը ենթակա է վերանորոգման, մաշված-վնասված էլեմենտների և հատակների վերականգմամբ:

Շենքի վերանորոգման շինարարական աշխատանքները կատարել ընդունված կարգով հաստատված նախագծով՝ հաշվի առնելով հետազննությամբ նշված թերությունները:

« Ալենշին » ՍՊԸ
Տնօրեն՝ Ա. Սահակյան

Մասնագետ՝ Ա. Բեգլարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-001523, 2-րդ դաս

*(սերիան, համարը, դասը)*

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՆՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ

*(քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակը)*

ՏՐՎԱԾ Է

2024-10-14, «ԱԼԵՆՇԻՆ» ՍՊԸ

*(լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, օրը, քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը,*

ՀՀ, ԼՈՌԻ, ՎԱՆԱՁՈՐ, ՎԱՆԱՁՈՐ, ԹՈՒՄԱՆՅԱՆ, 9Ա, 6

*գտնվելու վայրը՝ այդ թվում, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)*

Գործողության ժամկետը՝ 14.10.2029թ.

*(օրը, ամիսը, տարեթիվը)*

ՀԱԿԻՉ ՀԱՄԱՐ՝ UGC6-D49C-CBE3-5259

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):